

բանի (սրպես գլխավոր) փոքր հիդրոտուրբինների և Կոմպրեսորների գործարանների բազայի վրա:

Արդեն մշակվել է փորձարկման ստենդի և լաբորատորիայի նախագիծը՝ թողարկման համար նախատեսված դիզել-կոմպրեսորների հետազոտության և վերջնամշակման գծով, հավաքվել է ներմուծական ունիկալ լաբորատորիական սարքավորում, ինչպես նաև մշակվում են փորձարկումների մեթոդներն ու ծրագիրը:

Դազատուրբիններին տեղակայումների բաժինը միաժամանակ մշակում է ազատ մխոցային գազային գեներատորի գազատուրբիններին տեղակայումի սխեմայի հիմնական ագրեգատի տեխնիկա-

աշխատանքային նախագիծը: Մշակվում է ստենդների նախագիծը՝ ինչպես գազատուրբիննային տեղակայումի առանձին հանգույցների, այնպես էլ ամբողջությամբ վերցրած տեղակայումի հետազոտության գծով:

Այդ ամենը հնարավորություն է տալիս ենթադրելու մեր ուսապուրիկայում տեխնիկայի և մեկ առաջավոր ճյուղի՝ գազատուրբաշինության գարգացման հնարավորությունների մասին, որը գըտնըվում է բուռն պրոցեսի ստադիայում և որի արտադրանքին են սպասում երկրի ժողովրդական տնտեսության հարակից շատ ճյուղերը:

ԺՈՂՏՆՏԽՈՐՀԻ ՀԱՆՔԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՏԱՐՎՈՂ ԼԵՌՆԱ-ԿԱՊԻՏԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՌԵԶԵՐՎՆԵՐԸ

Գ. ԼՈՒՍԻՆՅԱՆ

«Արմգիպրոցվետմետ»-ի լեռնային բաժենի պետ

Ո. ՏՐԱՌՈՒԹՅԵՆ

«Արմգիպրոցվետմետ»-ի լեռնային բաժենի գլխավոր մասնագետ

Հայաստանում գունավոր մետաղների արդյունահանման անընդհատ աճը տեղի է ունենում ինչպես նոր հանքարանների և բացահանքերի շինարարության, այնպես էլ արտադրական կարողությունների լավագույն օգտագործման, արտադրության մեքենալացման ու տեխնոլոգիական պրոցեսների բարելավման հաշվին:

Հանքարանային շինարարության հետ միաժամանակ, լեռնային աշխատանքներ ճակատը ընդուրակելու նպատակով, օգտակար հանածոների արդյունահանման համար անընդհատ բացվում են նոր հորիզոններ և ընդարձակվում են աշխատանքները գործող հորիզոնների թվերում:

Այս առնչությամբ կարեոր գործոն է զանազան տեսակի լեռնային հիմնական փորվածքների ժամանակին կատարումը, որ պայմաններ է ստեղծում պետական պլանի կատարման համար:

Գունավոր մետաղների հանքավայրերի տեղադրությունը լեռնա-երկրաբանական պայմաններին և տեղանքի լեռնային ուղիերին համապատասխան,

ստորերկրյա եղանակով լեռնային աշխատանքներ կատարող Հայաստանի հանքարաններում սահմանվել է հանքանութերի տեղափոխումների համար հիմնական բովանդակների միջոցով բացման տիպային սխեմա, որոշ դեպքերում օժանդակ նշանակություն ունեցող կույր հանքահորերի ավելացմամբ: Այդ տիպի փորվածքները ժամանակին կատարելուց զգակի չափով կախված է լեռնային ձեռնարկությունների հետագա աշխատանքի հաջողությունը:

Ժողովածությունի հանքարաններում մինչև այժմ կատարված այդ տիպի փորվածքների բնորոշներկայացուցիչները և նրանց կատարման արագությունը ցույց են տրված հետևյալ աղյուսակում:

Առանց զգակի սխալանքների կարելի է ընդունել, որ անցած ժամանակաշրջանում լեռնային հիմնական փորվածքների կատարման միջին արագությունը կազմում է մեկ ամսում հորիզոնական ուղղությամբ 30—40 գ.մ. (գֆամետր), ուղ-

Դահլիճաց ուղղությամբ՝ 15 դ.մ. և հանքահորերի
համար՝ 8—10 դ.մ.:

Փորվածքի անվանումը	Օրկարգություն նշ. յ	Անցման իրար- կաժըլ	Անցման ըս- կիզըլ	Անցման վերջը	Անցման օրացուցա- ման միջին բարձրությունը
1. Հանքեղությի հանք- վարչության (ԶՀՎ) № 1 հիմնական բո- վանցք	4500	6	1931 թ.	1948 թ.	42
2. ԶՀՎ Լենինյան հան- քարանի № 2 հիմ- նական բովանցք, հորիզոնը՝ 80 մ .	650	6	1945	1946	50
3. ԶՀՎ Լենինյան հան- քարանի «Սարալիխ 3» հիմնական բո- վանցք	1096	6,7	1954	1957	34
4. Հանքաբարի իշանցք՝ ԶՀՎ «Սարալիխ 3» հորիզոնական բո- վանցքից դեպի № 1 հիմնական բովանց- քը	164	3,2	1955	1955	20
5. Շամլուղի հանքաբա- րի հիմնական բո- վանցք, հորիզոնը՝ 140 մ	1200	6	1945	1948	33
6. Շամլուղի հանքաբա- րի կուլյ հանքանոր, 140 մ հորիզոնից մինչև 32 մ հորի- զոնը	108	10,6	1949	1951	8
7. Դաստակերտի կոմ- բինատի 16 բիս բո- վանցք	450	5	1952	1953	36
8. Ախթալայի հանքա- բարի № 16 բովանցք (վերակառուցում և նոր անցում	760	6	1954	1956	33

Այդ ժամանակաշրջանում նշվել են լեռնային
փորվածքների կատարման առանձին ռեկորդա-
յին արագություններ՝ 78 դ.մ. մեկ ամսում ԶՀՎ
№ 1 հիմնական բովանցքի անցման ժամանակ և
մինչև 90 դ.մ. մեկ ամսում Ախթալայի հանքա-
բարի № 16 բովանցքի անցման ժամանակ:

Վերը թվարկած հորիզոնական փորվածքների
անցման ժամանակ, որպես կանոն, կիրառվել է
մոտավորապես աշխատանքի միևնույն կազմա-
կերպումը.

1. Ցեղական անցման հիմնական օպերացիա-
ները կատարվել են հաջորդականորեն:

2. Ապարի բարձման ժամանակ կիրառվել է,
ծեռքի աշխատանք և հազվագյուտ դեպքերում
բարձող մեջնակ:

3. Ապարի դուրս հանումը էլեկտրաքարշերով,
յուրաքանչյուր 50—60 մ հետո փակուղային
մուտքերում վագոննետները փոխելով:

4. Աշխատանքների օդափոխումը սեղմված
օրում:

Անցման աշխատանքների ցիկլն ավարտվում
էր 6—8 ժամյա երկու հերթափոխի ընթացքում,
այսինքն՝ գործնականորեն մեկ հերթափոխը կա-
տարում էր հորատումը, պայմենացումը, օդափոխու-
մը, իսկ երկրորդը՝ ապարների հավաքումը: Մըշ-
տական ճանապարհների վրաքաջը համատեղվում
էր հորատման հետ, իսկ ամրակապումը, ըստ
անհրաժեշտության, կատարվում էր երկու հեր-
թափոխներում:

Լեռնային հիմնական փորվածքների անցկաց-
ման բնագավառում ձեռնարկությունների անց-
յալի փորձի վերլուծությունը ցույց է տալիս, մի
կողմից, որ նրանց տեմպերը չեն համապատաս-
խանում ժամանակակից պահանջների ու խնդիր-
ների մակարդակին և, մյուս կողմից, զգալիորեն
ետ են մնում Սովետական Միության ու արտա-
սահմանի բազմաթիվ ձեռնարկությունների այդ
բնագավառում ձեռք բերած արդյունքներից:

Գունավոր մետալուրգիայի գործող ձեռնար-
կությունների կարողությունների հետագա պլա-
նային ավելացման կարգով, Հայկական ՍՍՀ-ում
նախագծվել են գգալի ծավալով լեռնային հիմ-
նական փորվածքներ, որոնցից մի քանիսի նշա-
նակությունն ու ծավալները բերված են հետևյալ
աղյուսակում:

Փորվածքների անցկացման անհրաժեշտ արա-
գությունը հիմնավորված է «Արմգիպրոցվետ-
մետ»-ի նախագծերով և նրա պահպանումից է
կախված ձեռնարկությունների հետագա հաջող
աշխատանքը:

Պարզ է, որ լեռնային փորվածքների կատար-
ման արագության ձեռք բերված մակարդակի
դեպքում ձեռնարկությունների գարգացման պլա-
նավորվող հեռանկարը ձախողվելու է:

Անցումների նախագծված արագությունները
միանգամայն ունել են և նույնիսկ փոքր ինչ ցածր
սովետական ու արտասահմանյան շատ ձեռնար-

կությունների ձեռք բերած ժամանակակից արագություններից:

Եթե մոտ անցյալում արագացված անցումների շարքն էին դասում հանքախորշի ամենամյա 40—50 դ. մ. առաջանցումը՝ հորիզոնական փորփածքների համար և 20—30 դ.մ.՝ ուղղաձիգ փորփածքների համար (բացի հանքահորերից), ապա այժմ այդ սահմանը զգալիորեն գերազանցվել և հորիզոնական փորփածքների համար կազմում է 100—180 դ.մ. մեկ ամսում, ուղղաձիգ փորփածքների համար (բացի հանքահորերից) առաջանցումը նույնքանով բարձրացել է: Հաճա-

լեքսային: Նրա յուրաքանչյուր բանվորը պետք է կատարելապես տիրապետի այն բոլոր մասնագիտություններին (հորատող, պայմանագործ, բեռնող մեքենայի մեքենավար, ամրակապող, փականագործ), որոնք անհրաժեշտ են ցիկլի սպասարկման համար:

2. Անցման աշխատանքների ցիկլը իրագործվում է երկու հիմնական, ամենից ավելի աշխատար պրոցեսների՝ ապարի հորատման ու հավաքման մասնակի կամ լրիվ պարտադիր համատեղման դեպքում:

3. Արագային հանքախորշը հազեցվում է առանձնացված օգափոխումով, որը հերթական պայմանագումից 15 րոպե հետո ապահովում է բանվորների հանքախորշը մտնելը:

4. Ապարի պարտադիր մեքենայցված բարձրությունը բարձրությունը, բարձրությունը մեքենաների անշնդիր ապահովությունը կամ լրիվ պարտադիր ստեղծելով:

5. Պինդ ապարներում ձեռքի թեթևությունը միշտ պերֆորատորներով հորատելիս, հանքախորշում աշխատող հորատողների քանակությունը որոշվում է հետեւյալ հաշվով՝ մեկ հորատողի համար 1,75—2,0 մ² հանքախորշ:

Շաճկի և փորփածքների անվանումը	Փորվածքի նշանակությունը	Երկարությունը մ-ով		Կարուծքը մ-ով		Կարուծքը մ-ով	
		Բարձրությունը	Հասնականությունը	Կարուծքը մ-ով	Հասնականությունը	Կարուծքը մ-ով	Հասնականությունը
1. Ալիթալյի հանքարանի 813 մ հորիզոնի բուժանցք	Հանքաքարի փոխադրումը հարստացնող փարբիկա	1120	1120	6,7	14	80	
2. Նույնը, 905 մ հորիզոն.	"	1036	1036	5,6—7,9	10	104	
3. Ալիթալյի հանքարանի հանքաքարի հիմնական իշանցք	"	120	120	4,2	3	40	
4. Դաստակերտի հանքարանի հանքարանի հիմնական իշանցք	Ներքին հորիզոնների բացումը, հանքաքարի փոխադրումը ֆարբիկա	2105	2105	7—8	16	130	
5. Դաստակերտի հանքարանի հանքարանի հիմնական իշանցք	Հանքաքարի տեղափոխումը դեպի տրանսպորտային բովանցքը	100	100	5	2	50	
6. Ռովանցը՝ Քաշարանի կոմբինատի հիդրոտրանսպորտային համար	Ֆարբիկայի մնացուկների տեղափոխումը հիդրոտրանսպորտային	3750	3750	8	30	125	
7. ՀՀԿ «Հիմնական» հորիզոնական բովանցքի հետախուզական լեռշաղագույնությունների մասնությունը և բացումը	Ստորին հորիզոնների հետախուզական լեռշաղագույնությունների մասնությունը և բացումը	1750	1750	6,7	22	80	

խակի են դարձել անցումների ուեկորդային արագությունները, որոնք մեկ ամսում հասնում են 400—900 դ.մ.:

Վերջին տարիների անցումների արագությունների փորձի ընդհանրացման շնորհիվ կարելի է եղանակացություն անել որոշ ընդհանուր սկզբունքների մասին, որոնք պարտադիր պայման են հանդիսանում բարձր արագությունների հասնելու համար:

1. Անցման բրիգադան պետք է լինի կոմա-

խակ առանձին դեպքերում այդ նորման իշնում ու հասնում է 1,5 մ²:

6. Արագային անցումը ապահովում է անցման սարքավորման լրիվ ուեզերվով և անցման աշխատանքների ամրող ժամանակաշրջանի և ծավալի համար անհրաժեշտ նյութերի առկայությամբ:

Անցման ժամանակ կիրառվող ժամանակակից միջոցներից հատկապես իրենց ուշադրություն են գրավում պայմանագործ ապարի բարձրման ու հան-

քախորշից այն տեղափոխելու տեխնիկական լուծումները: Այդ խնդրի լուծման վրա անհրաժեշտ ենք համարում ավելի մանրամասնորեն կանգ առնել, քանի որ վերևում թվարկած բոլոր մյուս պայմանները համեմատարար հեղտությամբ կարող են կենսագործվել ամենապարզ ու մատչելի կազմակերպական ու տեխնիկական միջոցների օգնությամբ:

Այդ բնագավառում տեղ գտած ժամանակակից տեսնենցները նպատակ ունեն կրճատել բարձման ժամանակը, բարձման խոշոր անոթների կիրառման հաշվին, որոնք մեծ չափով կը բարեկարգացնեն ամանակման օպերացիաների ժամանակը և ավելացնեն բարձող մեքենայի աշխատանքի զուտ ժամանակը:

Տեղափոխման անոթի տարողությունը հասցնելով ցիկլի ընթացքում պայմենացված լեռնային դանդաղածի ծավալին, ապահովում են բարձող մեքենաների աշխատանքի հետեւական պայմանները և այլ հավասար պայմաններում տալիս են անցման բացառիկ բարձր ցուցանիշներ: Այդ եղանակը հատկապես էֆեկտավոր է մեծ երկարության և փոքր կտրվածքի մի գծանի անցումների դեպքում, որոնց սահմանափակ չափերը թույլ չեն տալիս վագոննետների արագ փոփոխումը:

Հանքախորշում վագոննետների փոփոխման գործողության վերացման միտքը վաղուց է ծագել, սակայն անհաջող կոնստրուկտիվ լուծումների պատճառով, ն և չափազանց դանդաղ էր կենսագործվում: Սկզբում կիրառվում էին տարբեր տիպի փոխաբեռնիշներ, որոնցից ամենակատարյալը «Կրիվաս-8» կոնվեյերն է: Խսկ ներկայումըս երևան են եկել ուրիշ օրիգինալ կոնստրուկցիաներ, որոնք գործնականում իրենց արդարացրել են մոտ 2 կմ երկարությամբ և $1,95 \times 2,4$ մ կտրվածքով: Օլոռ-Նեյ Լերիջի թունելի (Հյուսիսային Շոտլանդիա) անցման ժամանակ սէիմկո-21» բարձիչ մեքենայով (հայրենական ՊՄԼ-5 մեքենայի նախատիպը) ապարը բարձելու համար կիրառվում էր 25 մ³ տարողությամբ վագոն՝ ցիկլի ընթացքում պայմենացված ապարի ամբողջ ծավալի համար: Վագոնը բաղկացած էր 21 մետր երկարություն ունեցող շրջանակի վրա մոնտաժված թափքից: Երշանակը տեղադրված էր երեք սունանի և սայլակների վրա: Ապարի տեղափոխման համար, թափքի երկայնությամբ, նրա հա-

տակում, ներկառությամբ էր պողպատե ժապավենով կոնվեյեր: Ժապավենն ուներ հիդրավլիկ հաղորդակի: Բարձմանը զուգընթաց վառոնում գրտնը վողակածի կոնվակտ զանգվածի ձևով ետ էր շարժվում, տեղ բացելով նոր բաժինների համար: Ամբողջ ապարի բարձումը իրագործվում էր 40 րոպեի ընթացքում:

Կագոնը տեղափոխվում է գետնի երեսը, որտեղ նրա ետևի ճակատային անցքով, ներկառությամբ նույն կոնվեյերի օգնությամբ ապարը բեռնաթափվում է լցակույտերի մեջ: Մեր պայմաններում այդպիսի կոնստրուկցիայի կիրառումը միանգամայն ցանկալի է, սակայն այդպիսի վագոն պատրաստելիս մենք կհանդիպենք մեծ դժվարությունների:

Հայրենական պրակտիկայում, հիմնական սկզբունքը պահպանելու դեպքում, գոնվել է հարցի ավելի պարզ կոնստրուկտիվ լուծումը: Բելուսովկայի հանքվարչության ինժեներներն են. Վոլոկվոր, Բ. Գրուդինը և Ն. Բակլիցկին նախագծել, հանքարանային արհեստանոցներում պատրաստել և անցումներում հաջողությամբ կիրառել են սկրեալերային բունկեր-գնացքը (ՊՍԹԲ-1):

Բելուսովկայի հանքարանում հորիզոնական փորձքածների անցման սովորական արագությունը մեկ ամսում հավասար է 30-40 գ.մ., իսկ վերջին երեք տարվա մաքսիմալ արագությունը՝ 54 գ.մ. :

1957 թվականի ապրիլից, երբ բունկեր-գնացքը կիրառվել է Հ-Ա շտրեկի անցման ժամանակ, ձեռք են բերվել հետեւյալ արդյունքները:

1957 թ. —

	10 ³ գ. մ.	մեկ ամսում 26 աշխ. օրուամատ
մարտիս	105	—»— 25 —»—
հունիս	102	—»— 25 —»—
հուլիս	93	—»— 17 —»—
օգոստոս	105	—»— 27 —»—
սեպտեմբերի	133	—»— 25 —»—
հոկտեմբերի	123	—»— 27 —»—
նոյեմբերի	122	—»— 24 —»—
դեկտեմբերի	140	—»— 25 —»—

1958 թ. —

հունվար	144	—»— 26 —»—
փետրվար	110	—»— 25 —»—
մարտ	178	—»— 27 —»—
ապրիլ	208	—»— 26 —»—
մայիս	148	—»— 24 —»—
հունիս	109	—»— 25 —»—

Նշված ամբողջ ժամանակաշրջանում ձեռք բերվել կայուն միջին արագություն՝ 130 գ.մ. մեկ ամսում:

Անցման սկրեպերային բունկեր-գնացքը բաղկացած է առանձին թափքերից՝ սեկցիաներից (առանց ճակատային պատերի), որոնք մոնտաժված են ԿՕԿ-80 վագոնների սալլակների վրա, ինչպես նաև բեռնող ու բեռնաթափող վագոններից: Բունկեր-գնացքի կազմի մեջ են մտնում, նաև առանձին սալլակի վրա մոնտաժված ԼՌԻ-15 սկրեպերային կարապիկը և էլեկտրաքարշը:

Թափքի սեկցիան բաղկացած է երկու ոչ գուգահեռ պատերից ու հաստակից, որոնք պատրաստված են 8 մմ հաստությամբ թերթավոր պողպատից: Վագոնները միացնելիս թափքերի սեկցիաները մտնում են մեկը մյուսի մեջ, ստեղծելով ամբողջական բունկեր-գնացք: Բեռնման ու բեռնաթափման սեկցիաների վրա գտնվում են երկուական բռնիչներ, որոնցով բունկեր-գնացքն ամրացվում է ուղղակին:

Սկրեպերային բլոկն ամրացվում է ընդունողարձող վագոնի շառնիրային տրավերզին: Բեռնման ժամանակ տրավերզը սկրեպերային բլոկի հետ միասին գտնվում է վերին դիրքում, որն ապահովում է նրա տակով բարձիչ մեքենայի շերտի անցումը:

Բեռնաթափման ժամանակ տրավերզը բլոկի հետ դրվում է ստորին դիրքում: Այդ ժամանակ բլոկը գտնվում է տրոլեյից ներքև: Սկրեպերավարի աշխատանքի անվտանգությունն ապահովելու նպատակով բունկեր-գնացքի բեռնման ու բեռնաթափման վայրում կոնտակտային հաղորդաւարն անշատվում է: Ապարի հավաքումը կատարվում է ՊՄՀ-5 բարձող մեքենայի միջոցով: Ապարը լցվում է բունկեր-գնացքի բեռնման վագոնի մեջ, այնուհետև ԼՌԻ-15 սկրեպերային կարապիկի միջոցով բաշխվում է բունկեր-գնացքում:

Հանքախորշից ապարի հավաքելու ժամանակը տատանվում է 30—40 րոպեի սահմաններում: Բարձող մեքենայի փոխադրումը ապարից մինչև բունկեր-գնացքը պակասեցնելու համար բունկեր-գնացքը մոտեցնում են բարձիչ-մեքենային:

Իր կառուցվածքի պարզության շնորհիվ բունկեր-գնացքը կարող է հեշտությամբ պատրաստվել սովորական հանքարանային արհեստանոցում:

Ներում: Հանքախորշում շահագործման ընթացքում նա մոնտաժի ու գեմոնտաժի կարիք չի ըգգում և բարձրացնում է հանքափորների աշխատանքի անվտանգությունը:

«Արմգիպրոցվետմետ»-ն իր տրամադրության տակ ունի բունկեր-գնացքի պատրաստմանն ու շահագործմանը վերաբերող անհրաժեշտ տեխնիկական դոկումենտացիա, որը կարող է տրամադրվել բոլոր շահագործված ձեռնարկություններին:

Հայաստանի հանքարաններում անցման աշխատանքների ժամանակ բունկեր-գնացքի կիրառումը զգալիորեն կբարձրացնի հորիզոնական լեռնային փորվածքների կատարման արագությունը: Բունկեր-գնացքը կարող է հաջողությամբ կիրառվել նաև երկրաբանական-հետախուզական աշխատանքների և հիդրոտեխնիկական թունելների շինարարության ժամանակ:

Մեր հանքարաններում ուղղաձիգ փորվածքների կատարման մեթոդներն ու կազմակերպումը նույնպես հիմնականում բազավորվում են հնացած սկզբունքների վրա: Ուղղաձիգ փորվածքների կատարման արագության ավելացումը պայմաններ է ստեղծում հանվածքի համար ժամանակին պաշարներ նախապատրաստելու, որ նախորոշում է լեռնային ձեռնարկության ոփթմիկ աշխատանքը: Ուղղաձիգ փորվածքների անցումների արագության ավելացումը առաջավոր մեթոդների օգնությամբ, միաժամանակ կիթեթնեցնի հանքագործների աշխատանքը և կստեղծի աշխատանքի անվտանգության պայմաններ:

Այդ պատճառով, միանգամայն ցանկալի է կիրառել առավել ժամանակակից մեթոդներ, որոնք գործնականում իրենց արդարացրել են:

1. Վերընթաց փորվածքների անցումը կախովի վանդակի օգնությամբ: Այդ եղանակը արմատավորվել է Սաղոնի և Կանսայի հանքարաններում և տալիս է հետեւյալ կայուն ցուցանիշները. անցման միջին արագությունը հանքախորշում մեկ ամսում կազմում է 150 դ.մ., անցման արժեքը 40%-ով ցածր է սովորականից, հանքահատի աշխատանքի արտադրողականությունը հերթափոխի ընթացքում հասնում է մինչև 4 մ³:

Նշված սկզբունքով նախատեսված է կատարել
ԶՀՎ Լենինյան հանքարանի 120 մ բարձրությամբ
հանքաքարի իջանցքը:

2. Վերընթաց հանքախորշերի անցում, նը-
րանց կոնտուրում ամրող խորությամբ հորատ-
ված հորատանցքերի կոմպլեկտի պայթեցմամբ:
Այդ եղանակի կիրառումը աշխատանքի առաջին

ստադիաներում պետք է էքսպերիմենտալ բնույթ
կրի:

Լեռնային փորվածքների կատարման գործում
ժամանակակից սարքավորման ու մեթոդների ար-
մատավորումը ապահաններ կստեռծի ստոռեռկ-
րյա եղանակով աշխատող լեռնային ձեռնարկու-
թյունների հաջող աշխատանքի համար: